ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԿԿ-ԳՀԱՊՁԲ-20/04-1

ք. Երևան «23» 01 2020թ.

Կադաստրի կոմիտեն ի դեմս գլխավոր քարտուղարի ժ/պ Գ. Եգանյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Էյչ Գրուպ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 122,625,000 (Մեկ հարյուր քսան երկու միլիոն վեց հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային

պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 24 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է

գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Կադաստրի կոմիտե	«Էյչ Գրուպ» ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց 7	ք. Երևան, Բաշինջաղյան 1փ., 13/30
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011030674	Հ/Հ 2500010488760100
ՀՎՀՀ 02534328	ՀՎՀՀ 01254973
Գլխավոր քարտուղարի ժ/պ՝ _____ Գ. Եգանյան (ստորագրություն) Կ.Տ.	Տնօրեն _____ Կարեն Հարությունյան /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 1
ԿԿ-ԳՀԱՊՁԲ-20/04-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը ***
1	30239100/512	պատճենահանման մեքենա 1(Բազմաֆունկցիոնալ սարք A3)	Xerox 1025	**Պատճենահանման մեքենա 1 (Բազմաֆունկցիոնալ սարք A3)** Բազմաֆունկցիոնալ պատճենահանող, տպիչ սարք, լազերային A-3 ձևաչափի, միագույն, իրականացնում է տպագրություն, սկանավորում ցանցով և e-mail, պատճենահանում : Տպագրությա/պատճենահանման արագությունը առնվազն 25 էջ/րոպե A4 ձևաչափի և առնվազն 13 էջ/րոպե A3 ձևաչափի համար, մեկամսյա աշխատանքների առավելագույն ծավալը առնվազն 50000 թերթ, A4 /միջին նախատեսվող ծավալը՝ 2500 ոչ պակաս/ ստանդարտ մատուցող դարակների ծավալը 350 թերթ A4 (լրացուցիչ դարակների տարողունակությունը ոչ պակաս քան 600թերթ լրակազմելու հնարավորությամբ),	հատ	600000	1800000	30	Ք. Երևան Արշակունյաց 7	30	Ֆինանսական միջոցների նախատեսվելու դեպքում կնքված համաձայնագրի հաշվառման պահից սկսած մինչև 2020 թ. 1-ին և 2-րդ եռամսյակ ըստ պատվիրատուի պահանջի

				կողային դարակի (Емкость лотка ручной подачи бумаги) տարողունակությունը ոչ պակաս քան 100 թերթ, ստանդարտ ելքի դարակի ծավալը 250 թերթ: Օգտագործվող թղթի խտությունը 60-163 գր/մ2 , օգտագործվող թղթի չափերը նվազագույնը :ոչ ավել քան A6 և ոչ պակաս A3, կամայական չափը - սկսած 125 x 102մմ-ից մինչև ոչ պակաս քան 297 x 432 մմ: Սարքի հիշողությունը առնվազն 1,5 ԳԲ պրոցեսորի հզորությունը առնվազն 1 ԳՀց, միկրոՍԴ հիշողություն 8 GB: PostScript/PCL շրիֆտերի քանակությունը առնվազն 136/107: Գունավոր սենսորային էկրան առնվազն 4,3” լայությամբ ռուսիֆիկացված մենյույով, դիմային USB միացման բնիկ՝ տպագրության կամ USB կրիչի վրա սկանավորում իրականացնելու համար , որը հնարավորություն է տալիս իրականացնել walk-up printing from Type A USB port PDF, JPEG ֆորմատով: Աշխատում է TCP/IP: HTTP/HTTPS, Internet Printing Protocol, LPR/LPD, Raw Socket Printing/Port 9100, IPv4/IPv6, WSD, LDAP, Bonjour® / AirPrint® , FTP, Mopria® ցանցային պրոտոկոլներով: Սարքի							

				ադմինիստրատիվ կառավարման պրոտոկոլները՝ DHCP, SNMP, WINS, HTTP, HTTPS, TLS, SNTP, MDNS: Անվտանգության ստանդարտ հնարավորություններն են՝ աուդիտի մատյանի առկայություն, կոդավորում AES 256-bit , FIPS 140-2 , TLS/SSL, SNMPv3: Աղմուկի մակարդակը ոչ ավել քան 46 Դբ: Էներգախնայող՝ պասիվ վիճակում սպառումը ոչ ավել քան 2 Վտ, աշխատող վիճակում ոչ ավել քան 1.1 ԿՎտ: Առաջին էջի ելքը պատճենահանման ժամանակը՝ ոչ ավելին քան 7.6 վրկ: Տպագրության լուծաչափը առնվազն 1200dpi, պատճենահանման լուծաչափը 600 x 600 dpi: Միացման եղանակները՝ Ethernet 10/100 Base-T, High-speed USB 2.0 , լրացուցիչ հնարավորությամբ՝ Wi-Fi 802.11 b/g/n և Wi-Fi Direct Wi-Fi ադապտերով: Օպերացիոն համակարգեր Windows, Linux, Mac OS, Citrix: Տպիչի կառավարման լեզուներն են՝ PCL 6, Adobe PostScript Օգտագործվող ներկափոշին մեկ կոմպոնենտային (առանց առանձին դեվելոպերի), պարունակում է Drum Unit 80000 էջի (օգտագործողի ուժերով արագ փոխարինվող թմբուկի հանգույց:							

				Տոներային ստանդարտ քարթրիջի տարողունակությունը ոչ պակաս քան 13 700 թերթ 5% լցվ՝ դեպքում: Բազային սարքավորումը լրակազմված է թմբուկով և տոներային քարթրիջով Վերը նշված տեխնիկական բնութագրով բոլոր բաղադրատարրերը պետք է լինեն նոր, չօգտագործված և գործարանային արտադրության: Լրացուցիչ պայմաններ՝ **Երաշխիքային սպասարկման ապահովում պաշտոնական արտադրողի կողմից լիազորված սպասարկման կենտրոնում (Սպասարկում՝ ք. Երևան, Վարդանանց 18/2 հասցեով):**							
4	30211220 /501	սեղանի համակարգիչներ	Համակարգիչ Dell Vostro, մոնիտոր dell 22 led, ups maxma 850 va	**Սեղանի համակարգիչներ** Մայրական սալիկ (motherboard) առնվազն B360 Chipset: Պրոցեսոր (processor)՝ Intel i3, առնվազն 8-րդ սերնդի և առնվազն 4 միջուկ , հաճախականությունը՝ առնվազն 3.6 GHz, հիշողությունը՝ առնվազն 6MB : Օպերատիվ հիշողություն (RAM)՝ առնվազն 4GB (1x4GB), առնվազն 2400MHz DDR4 Non-ECC SDRAM: Կոշտ սկավառակ ներքին (HDD)՝ առնվազն 1TB (7200RPM, SATAIII,	հատ	450000	5400 0000	120	Ք. Երևան Արշակունյաց 7	120	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքված համաձայնագրի հաշվառման պահից սկսած մինչև 2020 թ. 1-ին և 2-րդ եռամսյակ ըստ պատվիրատուի պահանջ

				64MB, up to 6Gb, 3,5") Վիդեո քարտ (video card)՝ մայրական սալիկում ինտեգրված, առնվազն HD Graphics 630 Համակարգչային ցանցայի միացումներ՝ 1 x Gigabit Ethernet Controller RJ-45, 802.11bgn, BT4.0: Արտաքին միացումների հնարավորություններ՝ Front IO ports: 2x USB 3.1 Gen 1 Type-A, Universal audio jack, 5:1 Media card reader, Rear IO ports: 4x USB 2.0, Gigabit Ethernet, HDMI, VGA, 3-stack audio jacks supporting 5.1 surround sound,: Ձայնային սարքավորումներ՝ ինտեգրված ձայնային քարտ: Իրան (Case)՝ Tower: Հոսանքի սնուցման սարք (Power cupply unit)՝պետք է լինի առնվազն 280W, հովացուցիչ (cooler) (APFC – Full range or EPA Bronze – Full range) Հոսանքի Լարը- Եվրոպական Գծային լարում՝ 100–240 VAC, 50–60Hz Չափսեր ՝ (WxHxD) 160mm (6.3”) x 373.7mm (14.7”) x 289.4mm (11.4 Քաշ՝ Starting Weight: 5.5kg (11.6 lbs), թույլատրելի շեղում՝ 10 % Մոնիտոր (Monitor 22 inch)՝ օգտագործվող հատվածի անկյունագծի չափը առնվազն 21.5'' դյույմ, կետայնությունը՝ առնվազն 1920x1080 Full HD clarity, Հաճախականություն							

				ը՝ առնվազն 60Հց, լայնաէկրան 16:9 հարաբերակցությամբ, (դիտարկման անկյունները առնվազն 90° հորիզոնական և 65° ուղղահայաց, հակադրությունը 600:1, (դինամիկ) պայծառությունը առնվազն 200 կ/դ, արձագանքը առնվազն 5մվ, միացման միջերեսը VGA: Ստեղնաշար համակարգչային (Keyboard)՝ գործարանային անգլերեն և ռուսերեն տառատեսակներով, ստեղնաշար համատեղելի MS Windows համակարգերի հետ: Մկնիկ համակարգչային (Mouse)՝ օպտիկական, լարային: Կոճակների քանակը՝ առնվազն 3, ներառյալ անիվի կոճակը: Անխափան սնուցման սարք՝ Տեսակը՝ Line interactive Մուտքային՝ Վոլտաժ՝ Required AC 160~280V Ֆազերի քանակը՝ Single phase +G Հաճախականությունը՝ 50Hz ± 5% Ելքային՝ Վոլտաժ՝ AC 220V ± 10% (mains) Հզորությունը՝ 850VA (510W) Հաճախականությունը՝ 50Hz ± 1% Crest factor 3:1 Անցման ժամանակը՝ ≤ 10ms Սոկետներ՝ 2 x Universal (Multi-type) Մարտկոց՝ Backup 20 minutes							

				Լիցքավորում՝ 90% հզորությունը 8 ժամվա ընթացքում Հզորության գործակիցը PF = 0.6 (երբ մուտքային տիրույթը -35% -23%, PF = 0.45) Transformer E Type Աղմուկի մակարդակը է 45dB (1 meter) Աշխատանքային միջավայր՝ 0 –ից - 40C Խոնավությունը՝ 20 ~ 90% (ոչ կոնդենսացված) Չափսեր՝ 278x100x139 մմ Համապատասխան ծրագրային ապահովման CD սկավառակ (ներ) և փաստաթղթեր, էլեկտրական հոսանքին և սարքերը իրար միացնող համապահասխան լարեր: Վերը նշված տեխնիկական բնութագրով համակարգիչի բոլոր բաղադրատարրերը պետք է լինեն նոր, և գործարանային արտադրության: Լրացուցիչ պայմաններ՝ համակարգիչը, մոնիտորը, ստեղնաշարն ու մկնիկը պետք է լինեն նոր, կոմպլեկտավորումը և փաթեթավորումը գործարանային և արտադրված նույն արտադրողի կողմից: Երաշխիքային ժամկետն առնվազն 3 տարի: Բոլոր սարքավորումների Երաշխիքային սպասարկման ապահովում պաշտոնական արտադրողի կողմից							

				լիազորված սպասարկման կենտրոնում **(Սպասարկում՝ Երևան, Հակոբ Հակոբյան փող., 3/10, Երևան, Խանջյան փող., 19 շենք, Երևան, Կոմիտասի պող., 49 շենք, 3-րդ հարկ հասցեներով):** Բեռնումը, տեղափոխումը և բեռնաթափումը կատարվում է Մատակարարի միջոցների հաշվին:							
5	30216110/505	սկաներներ համակարգիչների համար 1 (սկաներ առանց կոնտակտ)	Fujitsu sv600	**Սկաներներ համակարգիչների համար 1 (սկաներ առանց կոնտակտ)** Մեկ սեղմումով պրոյեկտման սկանավորման տեխնոլոգիա, միահյուսված և հարթ փաստաթղթերի սկանավորում, A3 տարածքի սկան 3 վայրկյանից պակաս ժամանակահատվածում, CCD օպտիկա ԼԵԴ կոճակով, գրքեր սկանելու ժամանակ կոր պատկերները հավասարեցնելու տեխնոլոգիա, Մատնահետքերը պատկերից հանելու գործառույթը, Ավտոմատ բերք, շեղբեր շտկում, պտտում Էջի հայտնաբերման ցուցիչ, Ֆիքսված սկանավորման ընդմիջման ունակություն Միանգամից բազմաթիվ փաստաթղթերի հատման գործառույթ: Սկաների տեսակը՝ պրոեկցիոն Պատկերի տվիչ՝ փոքրացնող ոսպնյակ / Գունավոր CCD 1 հատ	հատ	675000	6750000	10	Ք. Երևան Արշակունյաց 7	10	Ֆինանսական միջոցների նախատեսվելու դեպքում կնքված համաձայնագրի հաշվառման պահից սկսած մինչև 2020 թ. 1-ին և 2-րդ եռամսյակ ըստ պատվիրատուի պահանջի

				Լույսի աղբյուր՝Սպիտակ LED լամպ և լուսային ոսպնյակներ) - 2 հատ: Օպտիկական լուծաչափ՝ հորիզոնական սկանավորում: 285 ից 218 dpi / ուղղահայաց սկանավորում: 283 ից 152 dpi Սկանման արագություն (A3 ֆորմատ) Ավտոմատ ռեժիմ՝ սիմպլեքս ,,Լավացված ռեժիմ,, կամ ,,Լավագույն ռեժիմ,, 3 էջ/վայրկյան Ստանդարտ ռեժիմ՝սիմպլեքս (երանգների սահմանումը/ մոխրագույնի երանգներ 150 dpi) (սև և սպիտակ 300 dpi.) ՝ 3 էջ/վայրկյան: Լավացված ռեժիմ՝ սիմպլեքս (երանգների սահմանումը/ մոխրագույնի երանգներ 200 dpi) (սև և սպիտակ 400 dpi). 3 էջ/վայրկյան: Լավագույն ռեժիմ՝ սիմպլեքս (երանգների սահմանումը/ մոխրագույնի երանգներ 300 dpi) (սև և սպիտակ 600 dpi) ՝3 էջ/վայրկյան: Գերազանց ռեժիմ՝ սիմպլեքս (երանգների սահմանումը/ մոխրագույնի երանգներ 600 dpi) (սև և սպիտակ 1200 dpi). 3 էջ/վայրկյան: Փաստաթղթի չափը՝ A3 (ֆորմատ), A4, A5, A6, B4, B5, B6, բացիկ, այցեքարտ, կրկնակի նամակ (լանդշաֆտ), նամակ, իրավաբանական							

				(լանդշաֆտ) և այլ ձևաչափ Նվազագույնը ՝25.4 x 25.4 մմ / առավելագույնը՝ 432 x 300 մմ * 5 / Ավտոմատ կերպով ճանաչում է փաստաթղթի չափը Փաստաթղթի հաստությունը՝ 30 մմ կամ ավելի քիչ Միջերես՝ USB 2.0 (USB 1.1 աջակցությամբ) Պատկերի մշակման գործառույթներ՝ Փաստաթղթի տեքստի տեղաշարժի փոխհատուցում / Թղթի չափի ավտոմատ ճանաչում, պատկերի ավտոմատ ռոտացիա /Գույնի ավտոմատ ճանաչում, գրքի պատկերի շտկում / բազմաթիվ փաստաթղթերի ճանաչում Ուղղահայաց սկանավորման ավելացում (երկարությամբ)՝ ± 1,5% Մուտքային լարումը ՝100–240 VAC, 50/60 Հց Էներգիայի ծախս՝ Գործողության ընթացքում ՝20 Վտ կամ պակաս (քնի ռեժիմ ՝ 2.6 Վտ կամ ավելի քիչ) Սպասում ՝ 0,4 Վտ կամ պակաս Աշխատանքային միջավայր՝ ջերմաստիճանը ՝ 5-ից 35 ° C / Հարաբերական խոնավությունը ՝ 20-ից 80% (ոչ խտացնող) Չափս և քաշ՝ 210 x 156 x 383 մմ / 3,0 կգ Սերտիֆիկացում՝ ENERGY STAR® / RoHS*10 / Ecodesign Կոմպլեկտավորում՝ սկաներ; տեղադրման							

				ուղեցույց; տեխնիկական աջակցության թռուցիկ; երաշխիքային ձեռնարկ; ձայնասկավառակ; էլեկտրական լարը; USB մալուխ, էլեկտրական ադապտեր, դրայվերներ, ծրագրակազմ, Վերը նշված տեխնիկական բնութագրով բոլոր բաղադրատարրերը պետք է լինեն նոր, չօգտագործված և գործարանային արտադրության: Լրացուցիչ պայմաններ՝ Երաշխիքային ժամկետ առնվազն 1 տարի: Բոլոր սարքավորումների Երաշխիքային սպասարկման ապահովում պաշտոնական արտադրողի կողմից լիազորված սպասարկման կենտրոնում **(Սպասարկում՝ ք. Երևան, Վարդանանց 18/2 հասցեով):** Բեռնումը, տեղափոխումը և բեռնաթափումը կատարվում է Մատակարարի միջոցների հաշվին:							
6	30216110/506	սկաներներ համակարգիչների համար 2 (Սկաներ արագագործ)	HP Scanjet Enterprise Flow 5000	**Սկաներներ համակարգիչների համար 2 (Սկաներ արագագործ)** Հոսքային, սկանավորման թույլատվությունը՝ 600x600 dpi: Թղթի առավելագույն չափը ՝ A4 Երկկողմանի ավտոմատ սկանավորում: Օրական	հատ	637500	3187500	50	Ք. Երևան Արշակունյաց 7	50	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքված համաձայնագրի հաշվառման պահից

				ծանրաբեռնվածությունը՝ մինչև 6000 էջ զույնի խորությունը՝ արտաքին 24 բիտ / ներքին 48 բիթ Մոխրագույնի մակարդակները՝ 256 Խտությունը՝ 40-ից 413 գ / մ² Սկանավորման ֆորմատ: տեքստի և նկարների: ePub 3.0, HTML 4.0, Excel (*.xls, *.xlsx), PowerPoint (*.pptx), Word (*.docx), WordPerfect (*.wpd), PDF, JPEG, PNG, BMP, TIFF, Տեքստ (*.txt), Rich Text (*.rtf), XML и XPS. Ղեկավարման պանել՝ երկգծանի LCD էկրան (յուրաքանչյուր տողի 16 նիշ), սիմպլեքս և դուպլեքս սկան կոճակներ, չեղյալ հայտարարման կոճակ, LED կոճակ և գործիքի կոճակով ADF-ի մեջ տեղադրվող թղթի քանակը՝ 80 թերթ Սկանավորումը՝ ADF-ից սև-սպիտակ և գունավոր ռեժիմում՝ 300 dpi դեպքում՝ոչ պակաս 50 էջ/րոպե միակողմանի և 100 պատկեր/րոպե: Թղթերի չափերը՝ ADF-ից սքանավորման միջոցով՝ առավելագունը մինչև 216 x 3100 մմ, Միացումը՝ USB 2.0 և USB 3.0: Նվազագույն չափը՝ 310 x 198 x 190 մմ: Քաշ՝ 3.8կգ Մուտքային լարումը ՝90–264 VAC, 50/60 Հց Էներգիայի ծախս՝ 4.4 Վ (սպասում), 0.8 Վտ (քնած ռեժիմ), 0,1 Վտ (անջատված), 0,1 Վտ							սկսած մինչև 2020 թ. 1-ին և 2-րդ եռամսյակ ըստ պատվիրատուի պահանջի

				(ավտոմատ անջատված) Ջերմաստիճան՝ 10-ից 35 °C Սերտեֆիկացում՝ ENERGY STAR® 3.0 certified Շահագործում՝ խոնավություն 15 ից 80 % (առանց կոնդեսատի) Կոմպլեկտավորում՝ Թերթերի մատակարարման սկաներ; տեղադրման ուղեցույց; տեխնիկական աջակցության թռուցիկ; երաշխիքային ձեռնարկ; 2 ձայնասկավառակ; էլեկտրական լարը; USB մալուխ, էլեկտրական ադապտեր, դրայվերներ, ծրագրակազմ, Վերը նշված տեխնիկական բնութագրով բոլոր բաղադրատարրերը պետք է լինեն նոր, չօգտագործված և գործարանային արտադրության: Լրացուցիչ պայմաններ՝ Երաշխիքային ժամկետ առնվազն 1 տարի: Բոլոր սարքավորումների Երաշխիքային սպասարկման ապահովում պաշտոնական արտադրողի կողմից լիազորված սպասարկման կենտրոնում **(Սպասարկում՝ Երևան, Խանջյան փող., 50 շենք («Թեքեյան» կենտրոնի շենքում) հասցեով):** Բեռնումը, տեղափոխումը և բեռնաթափումը							

				կատարվում է Մատակարարի միջոցների հաշվին:							
7	30232110 /501	լազերային տպիչներ (Տպիչ սարք A4)	Canon LBP 226dw	**Լազերային տպիչներ (Տպիչ սարք A4)** Սև և սպիտակ գույնի տպագիր Նորմալ մինչև 38 էջ րոպե, ԲԵՌ (ամիս, A4 ֆորմատ) մինչև 80000 էջ, առաջարկվող Ամսական տպագիր ծավալը 750–4000 էջ, Տպագրության լուծաչափը առնվազն 1200x1200 dpi պրոցեսորի արագագործություն 2x800 ՄՀց, Կապ, ստանդարտ - 1 հատ USB, 1 հատ ցանցային Gigabit Ethernet 10/100/1000BASE-T, Գործող համատեղ համակարգեր - Բոլոր Windows (32/64bit), iOS, Android, Mac, Apple macOS, հիշողություն 1Գբ երկկողմանի տպում-ավտոմատ, Տոներային ստանդարտ քարթրիջի տարողունակությունը ոչ պակաս քան 3000 թերթ 5% համատեղելի չափսեր - A4; A5; A6; B5 (JIS); B6 (JIS); 16K (195 x 270 մմ, 184 x 260 մմ, 197 x 273 մմ); 10 x 15 սմ; Oficio (216 x 340 մմ) Էներգիայի մատակարարում - Մուտքագրման լարում 220 V: 220–240 V AC (+/- 10%), 50/60 Հց (+/- 2 Հց) քաշ 9.9 կգ Լրացուցիչ պայմաններ՝ Վերը նշված տեխնիկական բնութագրով բոլոր բաղադրատարրերը	հատ	240000	12000000	50	Ք. Երևան Արշակունյաց 7	50	Ֆինանսական միջոցների նախատեսվելու դեպքում կնքված համաձայնագրի հաշվառման պահից սկսած մինչև 2020 թ. 1-ին և 2-րդ եռամսյակ ըստ պատվիրատուի պահանջի

				պետք է լինեն նոր, չօգտագործված և գործարանային արտադրության: Լրացուցիչ պայմաններ՝ Երաշխիքային ժամկետ առնվազն 1 տարի: Բոլոր սարքավորումների Երաշխիքային սպասարկման ապահովում պաշտոնական արտադրողի կողմից լիազորված սպասարկման կենտրոնում **(Սպասարկում՝ ք. Երևան, Զաքյան փող., 8 շենք հասցեով):**							

** Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

*** Եթե հրավերով չի նախատեսվում մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի՝ ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում, ապա հանվում են «ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը » սյունակը: Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:*

**** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

*Պարտադիր պայման՝ ապրանքը չպետք է լինի օգտագործված

**Ապրանքի տեղափոխումը և տեղադրումը պահեստ կատարվում է մատակարարի կողմից

ԳՆՈՐԴ

Կադաստրի կոմիտե

ք. Երևան, Արշակունյաց 7

ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն

Հ/Հ 900011030674

ՀՎՀՀ 02534328

Գլխավոր քարտուղարի ժ/ա՝ _____ Գ. Եգանյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Էյչ Գրուպ» ՍՊԸ

ք. Երևան, Բաշինջաղյան 1փ., 13/30

«Արմսվիսբանկ» ՓԲԸ

Հ/Հ 2500010488760100

ՀՎՀՀ 01254973

Տնօրեն_____ Կարեն Հարությունյան

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 3
ԿԿ-ԳՀԱՊՁԲ-20/04-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
ԿԿ-ԳՀԱՊՁԲ-20/04-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

23.01.20 թ.կնքված թիվ ԿԿ-ԳՀԱՊՁԲ-20/04-1 համակարգչային սարքավորումների ձեռքբերման պայմանագրի վճարման ժամանակացույցը հաստատելու մասին

ք. Երևան 18.02.2020թ.

Կադաստրի կոմիտեն (այսուհետ՝ կոմիտե), ի դեմս գլխավոր քարտուղարի ժ/պ Գ. Եգանյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ պատվիրատու), մի կողմից և « Էյչ Գրուպ » ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2020 թվականի հունվարի 23 -ին կնքված համակարգչային սարքավորումների ձեռքբերման թիվ ԿԿ-ԳՀԱՊՁԲ-20/04-1 պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) 3.3 և 8.13 կետերով սահմանված պահանջները, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով պայմանագրի 3.3 և 8.13 կետերով սահմանված պահանջները՝ հաստատել պայմանագրի 1.1 կետով նախատեսված՝ համակարգչային սարքավորումների ձեռքբերման վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

1.2 Ապրանքի դիմաց վճարումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության (պայմանագրի թիվ 2 հավելված) հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, սակայն ոչ ուշ, քան 2020թ.-ի դեկտեմբերի 25-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում հաշվառման պահից, գործում է մինչև կողմերի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի կողմից պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելվածը կազմված է 1 էջից և համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Կադաստրի կոմիտե	*«Էյչ Գրուպ» ՍՊԸ*
Հասցե՝ Արշակունյաց 7	*ք. Երևան, Բաշինջաղյան 1փ., 13/30*
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	*«Արմսվիսբանկ» ՓԲԸ*
Հ/Հ 900011030674	*Հ/Հ 2500010488760100*
ՀՎՀՀ 02534328	*ՀՎՀՀ 01254973*
Գլխավոր քարտուղարի ժ/պ ---------- Գ. Եգանյան	*Տնօրեն ---------- Կ. Հարությունյան*
/ստորագրություն/	*/ստորագրություն/*
Կ.Տ	*Կ.Տ*

Հավելված N 2
ԿԿ-ԳՀԱՊՁԲ-20/04-1 ծածկագրով համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**										
			Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Ընդամենը
1	30239100 / 512	պատճենահանման մեքենա 1(Բազմաֆունկցիոնալ սարք A3)	9000000	18000000	18000000	18000000	18000000	18000000	18000000	18000000	18000000	18000000	**18000000**
4	30211220 / 501	սեղանի համակարգիչներ	27000000	54000000	54000000	54000000	54000000	54000000	54000000	54000000	54000000	54000000	**54000000**
5	30216110 / 505	սկաներներ համակարգիչների համար 1 (սկաներ առանց կոնտակտ)	3375000	6750000	6750000	6750000	6750000	6750000	6750000	6750000	6750000	6750000	**6750000**
6	30216110 / 506	սկաներներ համակարգիչների համար 2 (Սկաներ արագագործ)	15937500	31875000	31875000	31875000	31875000	31875000	31875000	31875000	31875000	31875000	**31875000**
7	30232110 / 501	լազերային տպիչներ (Տպիչ սարք A4)	6000000	12000000	12000000	12000000	12000000	12000000	12000000	12000000	12000000	12000000	**12000000**

ԳՆՈՐԴ
Կադաստրի կոմիտե
Հասցե՝ Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011030674
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր քարտուղարի ժ/պ ---------- Գ. *Եգանյան*
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Էյջ Գրուպ» ՍՊԸ
ք. Երևան, Բաշինջաղյան 1փ., 13/30
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2500010488760100
ՀՎՀՀ 01254973

Տնօրեն ---------- Կ. *Հարությունյան*
/ստորագրություն/
Կ.Տ